# 41. ԱՐՉԸ

*Ինո̈ւմ ա, չինո̈ւմ մին մարթ ա ինո̈ւմ։ Էտ մարթը մին օր քյնամ ա սարը խոտ հարել։ Վար հարըմ ա, պրծնում, խոտը տանում ա մին տանձի ծառի տակին թուփ անում, ինքյն էլ եր ինո̈ւմ էտ ծառը, տըեղ շինում, նի մննում մաչը։ Մինա̈կ կլո̈խը թողում պա̈ց։ Էտ քշերը մին արչ ա կյամ եր ինո̈ւմ ծառը, սկսում տանձ օտելը։ Լա̈վ էլ լո̈ւսնգյա̈ քշեր ա ինո̈ւմ։ Արչը վար տանձը կտրում ա լուսնինգյին տեմ օնում, թա̈ տեսնա հսալ ա՞, թա չէ, էտ վախտը ծառեն յրա մարթը աչկերը պա̈նում ա, տըեսնում մին ծեռք տանձը մեկնալ_ա դիրի ո̈ւրա̈ն։*

*Էտ մարթը ասում ա.— Օղում չը՛մ, օղում չը՛մ։*

*Արչը վխելան, վեր ա կյամ, փախչում։ Քշերավը էտ մարթը եր ա կենում վխեցած կյամ տոն, էլ ըտեղ չի քյինա՛մ։ Արչը վխելան էլ կյամ չի էտ տանձին տակը։*